<u>Հանրային ժողովի ծանուցում</u>

St. Francis Medical Center-ի առաջարկվող վաճառքը Prime Healthcare Services, Inc. ընկերությանը:

2020 թ-ի հունիսի 26-ին, ուրբաթ օրը առավոտյան ժ. 10:00-ին Կալիֆոռնիայի գլխավոր դատախազը հանրային ժողով կանցկացնի հեռակոնֆերանսի միջոցով St. Francis Medical Center-ի՝ Prime Healthcare Services, Inc. ընկերությանն առաջարկվող վաճառքի վերաբերյալ:

Ի պատասխան COVID-19-ի սպառնալիքի, նահանգապետ Նյուսոմը ստորագրեց N-33-20 գործադիր հրամանագիրը, համաձայն որի Արտակարգ դրություն հռչակվեց Կալիֆոռնիայում և հանձնարարվեց Կալիֆոռնիայում ապրող բոլոր անձանց մնալ տանը կամ իրենց բնակության վայրում, բացառապես այն դեպքերի, երբ անհրաժեշտ էր պահպանել դաշնային կարևոր նշանակության ենթակառույցների սեկտորների աշխատանքը: Նահանգապետ Նյուսոմը նաև ստորագրել է N-25-20 և N-29-20 գործադիր հրամանները, որոնք գլխավոր դատախազին իրավունք են տալիս հեռակոնֆերանսի միջոցով անցկացնել հանրային ժողով՝ առանց ֆիզիկական գտնվելու վայրը տրամադրելու, որտեղից հասարակության անդամները կարող են հետևել հանդիպմանը և առաջարկել հանրային մեկնաբանություններ:

Հանրային ժողովը հանրության համար հասանելի կլինի հեռախոսային և էլեկտրոնային եղանակով: Հանրության անդամները կարող են լսել հանրային ժողովը կամ, փոխարենը կարող են դիտել, լսել և առաջարկել մեկնաբանություններ ստորև նկարագրված մեթոդների միջոցով:

Հանրային ժողովի այս ծանուցումը տեղադրված է գլխավոր դատախազի կայքում՝ հղումներով և ցուցումներով, թե ինչպես կարելի է մասնակցել հանրային ժողովին BlueJeans տեսակոնֆերանսի միջոցով: https://oag.ca.gov/charities/nonprofithosp:

Ժողովի ընթացքում բոլոր մասնակիցների ձայնը կհամրեցվի մոդերատորի կողմից: Դուք ինքներդ չեք կարողանա համրեցնել կամ ապահամրեցնել ձեր ձայնը:

<u>ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</u>

<u>Համակարգչով՝ Google Chrome վեբ զննարկիչի միջոցով կամ BlueJeans Events հավելվածի միջոցով</u>

Լավագույն փորձ ունենալու համար BlueJeans-ը խորհուրդ է տալիս օգտվել Google Chrome վեբ զննարկիչից կամ անվճար ներբեռնել BlueJeans Events հավելվածը:

Դա հնարավորություն կտա մասնակցին դիտել, լսել կամ առաջարկել մեկնաբանություններ հանրային ժողովի ժամանակ: Մասնակիցը կարող է մեկնաբանություն թողնել զրույցի միջոցով կամ թողնել ձայնային մեկնաբանություն՝ անցնելով հետևյալ հղումով՝ https://primetime.bluejeans.com/a2m/live-event/fffjytvf

Ձայնային մեկնաբանության համար կարող եք ուղիղ եթերով փոխազդելու հարցում ուղարկել հետևյալ կերպ.

(1) Ձեր էկրանի աջ կողմում սեղմելով Բարձրացրած ձեռքի պատկերակը:
(2) Մոդերատորի կողմից հաստատվելուց հետո ընտրելով Շարունակել:
(3) Որից հետո դուք կհերթագրվեք:

Խոսելու համար խնդրում ենք սպասել մինչև մոդերատորը հրավիրի ձեզ՝ ձեր մեկնաբանությունն անելու: Այդ պահին մոդերատորը կապահամրեցնի ձեր խոսափողը: **Դուք պետք է խոսափող ունենաք՝ մեկնաբանությունը թողնելու համար:**

<u>Շարժական սարք</u>

Ներբեռնելով BlueJeans հավելվածը շարժական սարքի՝ բջջային հեռախոսի կամ գրասալիկի վրա՝ մասնակիցը կարող է դիտել, լսել և առաջարկել մեկնաբանություն հանրային ժողովի ընթացքում:

Շարժական սարքի միջոցով միանալու համար անցեք հետևյալ հղումով: Այս տարբերակի համար մասնակցից պահանջվելու է ներբեռնել BlueJeans հավելվածը, ինչը թույլ կտա նրան դիտել հանրային ժողովը և առաջարկել հանրային մեկնաբանություն: Մասնակիցը կարող է մեկնաբանություն թողնել կամ զրույցի պատուհանի միջոցով, կամ խոսելով: Առանց BlueJeans հավելվածը տեղադրելու՝ մասնակիցը չի կարողանա լսել և մեկնաբանություն առաջարկել:

a) Անցեք այս հղումով՝ https://primetime.bluejeans.com/a2m/live-event/fffjytvf
b) Եթե դեռ չունեք հավելվածը, ներբեռնեք այն:
c) Մուտքագրեք միջոցառման ID-ն՝ fffjytvf

<u>Հեռախոս</u>

Հեռախոսի միջոցով մասնակիցը կարող է միայն լսել հանրային ժողովը, սակայն չի կարող դիտել այն կամ առաջարկել մեկնաբանություն:

Հավաքեք հետևյալ համարներից մեկը.

a) +1 (415) 466-7000 (ԱՄՆ)
Մուտքագրեք PIN կոդը՝ 1270051, որից հետո #

b) +1 (760) 699-0393 (ԱՄՆ)
Մուտքագրեք PIN կոդը՝ 2198758648, որից հետո #

<u>BlueJeans-ի աջակցում</u>

BlueJeans-ի հաճախորդների սպասարկման հեռախոսահամար՝ +1 (408) 791-2830
Մասնակիցները կարող են նաև աջակցում ստանալ հետևյալ կայքում՝ https://support.bluejeans.com

<u>Հանրային ժողովի նպատակը</u>
Հանրային ժողովի նպատակն է ստանալ մեկնաբանություններ հիվանդանոցների և առողջապահական հաստատությունների առաջարկվող վաճառքի մասին, ինչպես նաև հաշվի առնել Բուժօգնության ազդեցության հայտարարագիրը, որը նախապատրաստվել է Կալիֆոռնիայի գլխավոր դատախազի կողմից ներգրավված խորհրդատուների կողմից: Նախքան

հանրային ժողովը, Բուժօգնության ազդեցության հայտարարագիրը հասանելի կլինի Կալիֆոռնիայի գլխավոր դատախազի կայքում՝ http://www.oag.ca.gov/charities/nonprofithosp:

Խորհուրդ ենք տալիս ձեր կարծիքը առաջարկվող գործարքի մասին գրավոր կերպով ներկայացնել Կալիֆոռնիայի գլխավոր դատախազին հետևյալ էլ. հասցեով՝ scott.chan@doj.ca.gov, զանգահարելով՝ (415) 703-5480, կամ փոստով ուղարկելով օրինակը գլխավոր դատախազի տեղակալին՝ Scott Chan-ին, 455 Golden Gate Avenue, Suite 11000, San Francisco, CA 94102 հասցեով: Գրավոր մեկնաբանությունների ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թ.-ի հունիսի 27, ժ. 17:00:

Ծանուցման վերոնշյալ նկարագրությունը հասանելի է նաև այլ լեզուներով

Արաբերեն, հայերեն, կամբոջերեն, չինարեն (կանտոնյան), չինարեն (մանդարին), անգլերեն, պարսկերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալոգերեն և վիետնամերեն: